



ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ 2021

Համառոտ տեղեկանք

COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՇԽԱՐՀՈՒՄ

- Ընդհանուր առմամբ, տվյալների բացերի պատճառով մեծ անորոշություն կա այն հարցում, թե ինչպես է COVID-19-ը ազդում և ազդելու ծնելիության և ծնունդների թվի վրա: Ժողովրդագրական փոփոխությունները, հավանաբար, տարբեր երկրներում տարբեր կլինեն:
- Օրինակ՝ 2020 թվականի վերջի վիճակագրությունը եվրոպական բազմաթիվ, հատկապես բարձր եկամուտներ ունեցող երկրներում ծնունդների թվի կտրուկ անկում է ցույց տալիս:
- Միևնույն ժամանակ, տվյալներն ու կանխատեսումները թույլ են տալիս ենթադրել, որ ցածր և միջին եկամուտ ունեցող որոշ երկրներում համավարակի հետևանքով ծնունդների թիվը կարող է աճել, մասնավորապես, չնախատեսված հղիությունների հաշվին:
- Անցյալում ծնելիության՝ այնպիսի ճգնաժամերով պայմանավորված անկմանը, ինչպիսիք էին 1930-ականների Մեծ դեպրեսիան կամ 2000-ականների վերջի տնտեսական ճգնաժամը, հաջորդում էր ծնելիության հետճգնաժամային վերականգնումը: Երկրների համար, որոնք համավարակի ընթացքում ծնելիության նվազում են ունեցել, առաջիկա ամիսներին կամ տարիներին կարող է նման վերականգնում նկատվել:
- Բացի այդ, չնայած որ առանձին երկրներում ժողովրդագրական փոփոխությունները կարող են կտրուկ թվալ, ընդհանուր ժողովրդագրական փոփոխություններն ավելի նուրբ են: Իրավիճակը, երբ բնակչությունն աճում է նույնիսկ այն ժամանակ, երբ ծնելիության մակարդակն ընկնում է, քանի որ երիտասարդ կանանց աճող մասնաբաժինը մտնում է վերարտադրողական տարիք, կհանգեցնի աշխարհի բնակչության աճին գալիք տասնամյակներում, չնայած նրան, որ որոշ տարածաշրջաններում և երկրներում բնակչության նվազում է կանխատեսվում:




Ծնելիության ցուցանիշների վրա կենտրոնանալն աչքաթող է անում կարևորը, իսկ կարևորն այնպիսի երկիր կառուցելն է, որտեղ մարդիկ ցանկանում են մնալ, ապրել և ընտանիք ունենալ:


Ալանա Արմիտաժ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների, 2021թ. հունվար-մայիս ամիսներին, նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ, ծնունդների թիվն ավելացել է 1519-ով՝ կազմելով 14318: Այս ծնունդները COVID-19-ի շրջանում, մինչև պատերազմի սկիզբը, տեղի ունեցած բեղմնավորման արդյունք են:




Այդուհանդերձ, ունենք ոչ թե բնակչության բնական հավելում, այլ նվազում՝ մահերի աճի պատճառով:



2020-ին և 2021 հունվար-մայիսին մահացությունը կտրուկ աճել է, ինչը պայմանավորված է COVID-19-ով և պատերազմով:

2021թ. հունվար-մայիսին COVID-19-ից մահացությունը կազմել է 2141 կամ ընդհանուր մահերի մոտ 15 տոկոսը:



2020թ. համեմատ, 2789-ով ավելացել է ամուսնությունների թիվը: Սրանք կարող են լինել COVID-19-ի և պատերազմի շրջանում հետաձգված ամուսնություններ: Այնուամենայնիվ, 2020թ. համեմատ աճել են նաև ամուսնալուծությունները՝ 431-ով:

